

Արձանագրություն N 3

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների նպատակով կազմակերպված, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/42» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«28» «Ապրիլի» 2026թ.
ժամը 17:45

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Հանձնաժողովի անդամներ

Ա. Բաբայան
Վ.Վահանյան, Ա.Գևորգյան, Հ.Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար

Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 06.04.26թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2026 թվականի ապրիլի 22-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2026 թվականի ապրիլի 23-ին ժամը 12:00-ին: 2026 թվականի ապրիլի 23-ին ժամը 14:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ	info@amamed.am	01332401
2	«Իվաֆարմ» ՍՊԸ	lvapharm89@gmail.com	08625799
3	«Մեդեք» ՍՊԸ	medeqlc@gmail.com	00244233
4	«Մեդէքսպերտ» ՍՊԸ	medexpertarmenia@gmail.com	04229065
5	Յուրի Տոնոյան Արայիկի ԱԶ	gnumner2024@mail.ru	47889417
6	«Մեդթրեյդ» ՍՊԸ	info@medtrade.am	00220168
7	«Տեխնո-Մ» ՍՊԸ	melsik.avagyan74@mail.ru	03584717
8	«Մարգ-Ֆարմաքիա» ՍՊԸ	tenders@margpharma.com	00842845
9	«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ	armedtechnicalc@gmail.com	02604367
10	«Փրայմ Մեդիքալ» ՍՊԸ	llc.primemedical@gmail.com	01334053
11	«Սմարթել» ՍՊԸ	smartelp@mail.ru	04434012

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

«Փրայմ Մեդիքալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ամբողջովին համապատասխանում է հրավերի պահանջներին և վերջինիս հայտը գնահատվում է բավարար: «ԱՄԱ Մեդիքալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին և քանի որ արձանագրված անճշտությունը ենթակա չէ շտկման, ապա վերծինիս հայտը մերժվում է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մասնավորապես հայտի ապահովման գործողության ժամկետը ըստ հրավերի պահանջների՝ հայտը ներկայացնելու օրվանից հաշված 120 նախատանքային օր է, սակայն մասնակցի կողմից բանկային երաշխիքի տեսքով ներկայացված հայտի ապահովման մեջ նշված է 90 աշխատանքային օր ժամկետը: Մնացած առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան և արձանագրված անճշտությունները ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 23.04.2026թ. ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

«Մեդիթերյո» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2026/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժինների համար ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «ալետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժինների համար նշել հստակ երաշխիքային ժամկետները, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի

արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2026/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հրավերի պահանջով ներկայացված Հավելված 1-ի և Հավելված 1.3-ի վրա դրված էլեկտրոնային ստորագրությունները, որոնք անվավեր են՝ հնարավոր չէ ստուգել և անհրաժեշտ է համակարգ ներբեռնել նշված հավելվածները նոր էլեկտրոնային ստորագրություններով: Անհրաժեշտ է շտկել նաև Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 4-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժինների համար ներկայացնել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և 00000000 այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Սմարթել» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2026/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 6-րդ չափաբաժնի համար անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական չափանիշները, բացառելով «ոչ ավել», «ոչ պակաս» նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

27.04.2026թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին մասնակիցների կողմից ներկայացված պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը արձանագրել է, որ բոլոր ծանուցված մասնակիցների կողմից ներկայացված շտկումները կատարված են:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը՝

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները շտկումներ ներկայացրած բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Բաբայան)

23.04.2026թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ ներկայացվել են հետյալ հարցումները, որոնց էլեկտրոնային աճուրդ համակարգով տրամադրվել են ներքոնշված պարզաբանումները. -

Հարցում 1, 10.04.2026թ., ժամը 13:44

«Հարգելի գործընկեր 1. Թիվ 4 չափաբաժնով պահանջվող <<Լապարոսկոպ որովայնային, ուրոլոգիական, գինեկոլոգիական և արթրոսկոպիկ միջամտությունների համար>> լրակազմի մեջ ներառված որոշ ապրանքների համար պահանջել եք և՛ MDSAP, և՛ ISO13485 որակի վկայականներ: Բժշկական սարքավորումների միասնական աուդիտի ծրագիրը (MDSAP) թույլ է տալիս MDSAP-ի կողմից ճանաչված աուդիտորական կազմակերպությանը անցկացնել բժշկական սարքավորումների արտադրողի միասնական կարգավորող աուդիտ, որը բավարարում է ծրագրին մասնակցող կարգավորող մարմինների համապատասխան պահանջները: MDSAP անդամներն են՝ Բրազիլիայի առողջապահական ազգային գործակալություն Կանադայի առողջապահություն Ճապոնիայի առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն և Ճապոնիայի դեղագործական և բժշկական սարքավորումների գործակալությունը ԱՄՆ Սննդի և դեղերի վարչություն Բժշկական սարքավորումների միասնական աուդիտի ծրագիր (MDSAP) հիմքում ISO13485-ն է, որին ավելացված են վերոգրյալ թվով հինգ երկրների բժշկական սարքավորումների շուկաների պահանջները: <https://www.fda.gov/medical-devices/cdrh-international-affairs/medical-device-single-audit-program-mdsap> <https://www.imdrf.org/working-groups/medical-device-single-audit-program-mdsap> Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ հիմնավորել և՛ MDSAP, և՛ ISO13485 վկայական պահանջելու անհրաժեշտությունը: 2. Նշված չափաբաժնի տեխնիկական բնութագրերն ուղղորդված են, խտրական, քանի որ դրանց համապատասխանում է միայն RZ Medizintechnik GmbH արտադրողի սարքը: Սա նշանակում է, որ այս աճուրդը մրցակցային չէ, կրում է ձևական բնույթ և բնութագրերը չփոխելու դեպքում հաղթողը լինելու է RZ Medizintechnik GmbH-ի ներկայացուցիչ մարզ ֆարմացիա ընկերությունը:»:

Պարզաբանում 1, 10.04.2026թ.

«1) Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիգի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:» 2) Ձեր այն պնդումը որ «Նշված չափաբաժնի տեխնիկական բնութագրերն ուղղորդված են, խտրական, քանի՞ որ դրանց համապատասխանում է միայն RZ Medizintechnik GmbH արտադրողի սարքը: Սա նշանակում է, որ այս աճուրդը մրցակցային չէ,

կրում է ձևական բնույթ և բնութագրերը չփոխելու դեպքում հաղթողը լինելու է RZ Medizintechnik GmbH-ի ներկայացուցիչ մարզ ֆարմացիա ընկերությունը:» անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը: Տեղեկացնում ենք Ձեզ, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում են նաև այլ ընկերությունների կողմից արտադրվող տարբեր մոդելների սարքավորումներ:»:

Հարցում 2, 10.04.2026թ., ժամը 15:56

«Հարգելի գործընկեր, Մրցույթի 2-րդ չափաբաժնով պահանջված անզգայացման սարքի տեխնիկական բնութագրերում նշել եք, որ սարքը պետք է ունենա ոչ պակաս քան 12" անկյունագծով ներկառուցված սենսորային էկրան սարքավորման կարգաբերումների համար և ոչ պակաս քան 15" անկյունագծով ինտեգրված մոնիտոր հիվանդի վիտալ տվյալների ցուցադրման համար: Խնդրում ենք մանրամասն (ցանկալի է օրինակներով, հղումներով և նույնիսկ նկարներով) պարզաբանել, թե ինչ եք հասկանում՝ ասելով ինտեգրված մոնիտոր: Պարզաբանեք նաև, թե ինչպես եք պատկերացնում հիվանդի վիտալ տվյալների ցուցադրման համար նախատեսված մոնիտորը ինտեգրված լինի անզգայացման սարքին, եթե այն բացարձակապես որևէ առնչություն չունի հենց անմիջապես անզգայացման սարքի գործառույթի հետ, հանդիսանում է լրացուցիչ սարք և հետևաբար, չի կարող լինել ինտեգրված անզգայացման սարքին: Հիվանդի վիտալ տվյալների ցուցադրման համար նախատեսված մոնիտորը միայն կից սարք է հանդիսանում և հիմնականում արտադրողների մոտ այն ամրացվում է անզգայացման սարքին լրացուցիչ արմունկի (թևի) միջոցով, որը նույնպես տարբեր արտադրողների մոտ տարբեր լուծումներով է արված, սակայն այն բացարձակապես ինտեգրված կամ ներկառուցված հնարավոր չէ համարել: Խնդրում ենք պարզաբանել հիմնավոր կերպով՝ հնարավոր երկիմաստ բացատրություններից խուսափելու համար՝ հաշվի առնելով շուկայում առկա ժամանակակից սարքերի տեխնիկական բնութագրերը: Նաև նշել եք, որ սենսորային էկրանի և մոնիտորի թվային էկրանի պիքսելները պետք է լինեն ոչ պակաս քան 1028x768: Կարծում ենք տպագրական սխալ է տեղի ունեցել, պետք է նշված լիներ 1024x768, քանի որ 1028x768 չափ գոյություն չունի:»:

Պարզաբանում 2, 10.04.2026թ.

«Պատասխան Հարգելի գործընկեր Անզգայացման սարքի գործարանային կառուցվածքով նախատեսված արմունկի/թևի կամ այլ հարմարանքի միջոցով ամրացվող վիտալ տվյալների ցուցադրման համար նախատեսված մոնիտորը հանդիսանում է ինտեգրված: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ոչ պակաս քան 1028x768» արտահայտության մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, նշված պահանջը պետք է ընդունել «ոչ պակաս քան 1024x768»:

Հարցում 3, 15.04.2026թ., ժամը 09:29

«Հարգելի գործընկերներ, Էլեկտրաէնցեֆալոգրաֆիայի (ԷԷԳ) համակարգի մատակարարման տեխնիկական բնութագրերի վերլուծության շրջանակում խնդրում ենք տրամադրել պարզաբանումներ մի շարք պահանջների վերաբերյալ, քանի որ դրանց համադրությունը հարցեր է առաջացնում կլինիկական կիրառման տեսանկյունից և բժշկական հաստատության խնդիրներին համապատասխանության առումով: Տվյալ տեխնիկական բնութագիրը հստակ արտագրված է ստորև հղման կայքից՝ <https://natus.com/neuro/brain-quick-eeg-system/> Հանդիսանում է սահմանափակող և համապատասխանում է միայն մեկ արտադրողի՝ Natus: Տեխնիկական առաջադրանքը ներառում է՝ 1. Պահանջներ, որոնք բնորոշ են ստանդարտ ոչ ինվազիվ կլինիկական ԷԷԳ-ին (վիդեո-ԷԷԳ, ռուտին հետազոտություններ, մոնիթորինգ ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում, ինտեգրում HIS/EMR համակարգերի հետ, թրենդների վերլուծություն), 2. Պահանջներ, որոնք վերաբերում են բարձր մասնագիտացված ինվազիվ էլեկտրաէնցեֆալոգրաֆիայի համակարգերին, ներառյալ՝ դիսկրետացման հաճախականություն ոչ պակաս, քան 10 կՀց, ընդլայնված վերլուծություն (ներառյալ HFO), ամբողջական

DC ռեժիմ և ֆունկցիաներ, որոնք կապված են էլեկտրոդների տեղադրման պլանավորման հետ՝ MRI/CT տվյալների օգտագործմամբ: Ուշադրություն ենք հրավիրում, որ նշված ֆունկցիաների կիրառումը (մասնավորապես՝ HFO, ≥ 10 կ<g դիսկրետացման հաճախականություն, լայնաշերտ վերլուծություն, էլեկտրոդների տեղադրման պլանավորում) վերաբերում է ինվազիվ էԷԳ մեթոդներին: Այս տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է՝

- ներյուվիրաբուժական ենթակառուցվածքների առկայություն (վիրահատարան, ստերեոտաքսիկ նավիգացիայի համակարգեր, ԿՏ/ՄՌՏ),
- մասնագիտացված բժշկական անձնակազմի մասնակցություն (ներյուվիրաբույժներ, էպիլեպտոլոգներ, կլինիկական ներյոֆիզիոլոգներ),
- էլեկտրոդների իմպլանտացիայի և ինվազիվ էԷԳ-ի մեկնաբանության մասնագիտացված ուսուցում, ներառյալ բարձր հաճախականության օսցիլլացիաների (HFO) վերլուծություն: Վերոնշյալի հիման վրա խնդրում ենք պարզաբանել՝ 1. Նախատեսվում է արդյոք ինվազիվ էլեկտրաէնցեֆալոգրաֆիայի իրականացում: 2. Նախատեսվում է արդյոք բժշկական անձնակազմի ուսուցում ինվազիվ էԷԳ մեթոդներին, ներառյալ էլեկտրոդների իմպլանտացիան և HFO-ի մեկնաբանությունը: 3. Արդյո՞ք պարտադիր են հետևյալ պահանջները՝ դիսկրետացման հաճախականություն ոչ պակաս, քան 10 կ<g, 24-բիթ (ADC), լայնաշերտ վերլուծություն (ներառյալ HFO), ամբողջական DC ռեժիմ և էլեկտրոդների տեղադրման պլանավորման ֆունկցիաներ: Հաշվետվությունների ինտեգրված ստեղծում ծայնային թելադրանքով- այս պարամետրը առկա է միայն վերոնշյալ արտադրողի մոտ: Ինչպես նաև որպես կանոն, նման պարամետրերը աշխատում են միայն սահմանափակ լեզուների ցանկով (հիմնականում անգլերեն և առանձին եվրոպական լեզուներ և ոչ հայերեն): Ուշադրություն ենք հրավիրում, որ էլեկտրոդների իմպեդանսի վերահսկումը էԷԳ-ի պարտադիր բաղադրիչ է և ժամանակակից կլինիկական պրակտիկայում իրականացվում է համակարգի էկրանին իմպեդանսի արժեքների քանակական ցուցադրման միջոցով: Միաժամանակ, յուրաքանչյուր մուտքի վրա առանձին LED ինդիկատորի առկայությունը ստանդարտ պահանջ չէ, քանի որ իմպեդանսը չափվող մեծություն է, որը պահանջում է քանակական գնահատում, այլ ոչ միայն տեսողական ցուցում: Կլինիկական պրակտիկայում ալիքների որակի վերահսկումը իրականացվում է ազդանշանի վերլուծության և ծրագրային վիզուալիզացիայի միջոցով, ինչը ապահովում է ավելի ճշգրիտ ավստորոշում: Այսպիսով, յուրաքանչյուր մուտքի վրա LED ինդիկատորի առկայությունը էական ազդեցություն չի ունենում ավստորոշման որակի վրա և չի հանդիսանում ֆունկցիոնալ անհրաժեշտ պահանջ էԷԳ համակարգերի համար: Վերոգրյալի կապակցությամբ խնդրում ենք դիտարկել հետևյալ պահանջները հանելու հնարավորությունը՝
- Հաշվետվությունների ինտեգրված ստեղծում ծայնային թելադրանքով
- Յուրաքանչյուր մուտքի համար իմպեդանսի ստուգման LED ցուցիչի առկայություն ինչպես նաև հստակեցնել ինվազիվ էԷԳ-ին վերաբերող պահանջների անհրաժեշտությունը: Կարծում ենք, որ նշված պահանջների հստակեցումը թույլ կտա ապահովել արդար մրցակցություն և ընտրել սարքավորում, որը առավելագույնս համապատասխանում է հաստատության իրական կարիքներին:»:

Պարզաբանում 3, 16.04.2026թ.

«Հարգելի գործընկեր Տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում են մեկից ավելի արտադրողների սարքավորումներ: Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նկարագրված չափորոշիչները պարտադիր են: Ուսուցումը ենթադրում է ծանոթացում սարքավորման աշխատանքին և մեթոդներին և իր մեջ չի ներառում ինվազիվ էԷԳ-ի համար էլեկտրոդների իմպլանտացիայի ուսուցում:»:

Հարցում 4, 15.04.2026թ., ժամը 09:30

«Հարգելի գործընկեր, խնդրում ենք պարզաբանում տալ-հետևյալ հարցմանը՝ Տեխնիկական առաջադրանքում սահմանված է թրքերի արհեստական շնչառության սարքին ներկայացվող պահանջ՝ էկրանի առկայություն առնվազն 15 դյույմ անկյունագծով: Նշված պահանջը չի վերաբերում

սարքավորման ֆունկցիոնալ կամ կլինիկապես նշանակալի բնութագրերին: Համաձայն ժամանակակից պահանջների բժշկական սարքերի նկատմամբ, ներառյալ ISO 80601-2-12 ստանդարտի դրույթները, ԹԱՇ սարքերի էական բնութագրերն են այն պարամետրերը, որոնք ազդում են օդափոխության անվտանգության և արդյունավետության վրա, տեղեկատվության ճիշտ արտացոլման և ազդանշանային համակարգի վրա: Միևնույն ժամանակ, էկրանի կոնկրետ անկյունագիծը չի դասվում կարգավորվող պարամետրերի շարքին: էկրանի ֆիզիկական չափը չի որոշում կլինիկական անվտանգությունը և ուղղակիորեն չի ազդում կլինիկական որոշումների ընդունման արագության վրա: Չկան կլինիկական կամ նորմատիվ հիմքեր պնդելու համար, որ էկրանի անկյունագծի մեծացումը մինչև 15 դյույմ ինքնին՝ • բարձրացնում է հիվանդի անվտանգությունը • նվազեցնում է բժշկական անձնակազմի արձագանքման ժամանակը • արագացնում է կլինիկական որոշումների ընդունումը ժամանակակից ԹԱՇ սարքերը 8-12 դյույմ էկրաններով ապահովում են բոլոր կենսական նշանակություն ունեցող պարամետրերի, շնչառական գրաֆիկների և ազդանշանների միաժամանակյա ցուցադրում՝ առանց էկրանների միջև անցման անհրաժեշտության, ինչը հաստատում է, որ էկրանի անկյունագծի և կլինիկական աշխատանքի արդյունավետության միջև կախվածություն չկա: Այսպիսով, էկրանի առնվազն 15 դյույմ պահանջի սահմանումը՝ • չունի կլինիկական հիմնավորում անվտանգության տեսանկյունից • չունի հիմնավորում որոշումների ընդունման արագության վրա ազդեցության տեսանկյունից • կրում է կառուցվածքային, այլ ոչ թե ֆունկցիոնալ բնույթ • հանգեցնում է գնման գործընթացում մասնակիցների քանակի անհիմն սահմանափակման:»:

Պարզաբանում 4, 16.04.2026թ.

«Հարգելի գործընկեր Տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում են մեկից ավելի արտադրողների սարքավորումներ:»:

Հարցում 5, 15.04.2026թ. 12:13

Հարգելի Գործընկեր, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2026/42 ծածկագրով մրցույթի 6-րդ չափաբաժնի (էլեկտրաուղեգրության սարքեր) Տեխնիկական բնութագրում նշված է «Հաշվետվությունների ինտեգրված ստեղծում ձայնային թելադրանքով» պահանջը, սակայն չի հստակեցվում՝ արդյոք այն հանդիսանում է պարտադիր պահանջ, թե կարող է դիտարկվել որպես օպցիոնալ ֆունկցիա՝ հետագայում ավելացնելու հնարավորությամբ: Հաշվի առնելով, որ նշված ֆունկցիան բավականին բարձրարժեք է և շատ հազվադեպ է կիրառվում, խնդրում ենք պարզաբանել՝ արդյոք հնարավոր է այն սահմանել որպես օպցիոնալ պահանջ և չներառել հիմնական կազմի մեջ թե ոչ? :»:

Պարզաբանում 5, 16.04.2026թ.

«Հարգելի գործընկեր Տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում հստակ սահմանված է «Հաշվետվությունների ինտեգրված ստեղծում ձայնային թելադրանքով» ֆունկցիայի առկայության պահանջը:»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն և 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշումների պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2026/42» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝

• «Մեդթերեյդ» ՍՊԸ-ն՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ 43,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

- «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ն՝ 4-րդ չափաբաժնի մասով՝ 70,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Փրայմ Մեդիքալ» ՍՊԸ-ն՝ 5-րդ չափաբաժնի մասով՝ 25,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Սմարթել» ՍՊԸ-ն՝ 6-րդ չափաբաժնի մասով՝ 6-րդ չափաբաժնի մասով՝ 15,777,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Որոշվեց. Մերժել բոլոր այն մասնակիցների հայտերը որոնց ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման գները՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի: Մերժել «ԱՄԱ Մեդիքալ» ՍՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը: Ուստի «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԱԶԲ-2026/42» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ 1-ին չափաբաժնի մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԱԶԲ-2026/42» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 29.04.2026թ.-ից մինչև 08.05.2026թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Բաբայան

Անդամներ՝ _____ Վ. Վահանյան

_____ Ա. Գևորգյան

_____ Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ _____ Հ. Սարգսյան

«Միսիսի Բ» ՓԲԸ հազմցնան համար անհրաժեշտ բեջկական արդարությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ՍՆ ԷԱՏԱՂՊԾՔ 2026/42 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հավաքարձ անժողը և 23.04.2026թ. կայացած հավաքարձ անժողից հետո

Զ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		ՄԵՐԷՔ ՍՊԸ					Մ ՈՒՆՔԱՎԻՐՈՒ ՍՊԸ					
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Կրճեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Կրճեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	
				Վերցնական առաջարկ												
1	Բեջկական բովայն ռադիոգրաֆիայի և ֆլյուորոսկոպի սարքավորում	33111330/	1	48,000,000.00	48,000,000.00	50,000,000.00	0.00	50,000,000.00	50,000,000.00	50,000,000.00	0.00	70,000,000.00	70,000,000.00	70,000,000.00	70,000,000.00	70,000,000.00
2	Ինտյալցիոն անզգայացնան սարք	33171700/	3	10,000,000.00	30,000,000.00	35,000,000.00	0.00	35,000,000.00	11,666,666.67	11,666,666.67	0.00	50,000,000.00	50,000,000.00	50,000,000.00	16,666,666.67	16,666,666.67
3	Ըրճերի արհեստական շնչառության սարք (ԸՄՇ)	33151250/	6	8,500,000.00	51,000,000.00	55,000,000.00	0.00	55,000,000.00	9,166,666.67	9,166,666.67	0.00	65,000,000.00	65,000,000.00	65,000,000.00	10,833,333.33	10,833,333.33
4	Լապարոսկոպ որովայնային, ուրոլոգիական, գինեկրոգիական և արթրոսկոպիկ միջանտոլությունների համար	33161190/	1	78,380,000.00	78,380,000.00	80,000,000.00	0.00	80,000,000.00	80,000,000.00	80,000,000.00	0.00	90,000,000.00	90,000,000.00	90,000,000.00	90,000,000.00	90,000,000.00
5	Վիրտուոսական ռեժսոգին համակարգ (C-Arm)	33111100/	1	48,000,000.00	48,000,000.00	50,000,000.00	0.00	50,000,000.00	50,000,000.00	50,000,000.00	0.00	68,000,000.00	68,000,000.00	68,000,000.00	68,000,000.00	68,000,000.00
6	ԷԷ-Գ համակարգ	33121100/	1	25,000,000.00	25,000,000.00	26,000,000.00	0.00	26,000,000.00	26,000,000.00	26,000,000.00	0.00	30,000,000.00	30,000,000.00	30,000,000.00	30,000,000.00	30,000,000.00

«Միլիանի Բ»-ի ԳԻԸ հազմեցման համար անհրաժեշտ բնօրինակ ստորագրումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԼՎ ԷԼԻՏԱՄԻԸ-2026/42 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հավաքարձ անձուրդ և 23.04.2026թ. կայացած հավաքարձ անուրդից հետո

Չ/Հ	Ստորագրման անվանումը	CFV կոդը	Քանակ	Նախահաշվային		Տնօրինման Արախիկի ԱԶ						Մեղբուրդ ՍՊԸ					
				Ստորագրման անվանումը		Վերջնական առաջարկ						Վերջնական առաջարկ					
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով		
1	Բժշկական բալային ռադիոլոգիայի և ֆլուորոսկոպիայի սարքավորում	33111330/	1	48,000,000.00	48,000,000.00	150,000,005.00	30,000,001.00	180,000,006.00	150,000,005.00	180,000,006.00	180,000,006.00	180,000,006.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
2	Բնակայանի անձեղայացման սարք	33171700/	3	10,000,000.00	30,000,000.00	150,000,005.00	30,000,001.00	180,000,006.00	50,000,001.67	60,000,002.00	18,000,000.00	0.00	18,000,000.00	0.00	18,000,000.00	6,000,000.00	6,000,000.00
3	Երեքերի արհեստական շնչատուփան սարք (ԹԱԸ)	33151250/	6	8,500,000.00	51,000,000.00	150,000,005.00	30,000,001.00	180,000,006.00	25,000,000.83	30,000,001.00	25,000,000.00	0.00	25,000,000.00	0.00	25,000,000.00	4,166,666.67	4,166,666.67
4	Լավորումով դրոկայային, ուղղորդական, գինեկոլոգիական և արթուրոլոգիական միջանոթությունների համար	33161190/	1	78,380,000.00	78,380,000.00	150,000,005.00	30,000,001.00	180,000,006.00	150,000,005.00	180,000,006.00	180,000,006.00	180,000,006.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
5	Վիրաբուժական ռենտգեն համակարգ (C-Arm)	33111100/	1	48,000,000.00	48,000,000.00	150,000,005.00	30,000,001.00	180,000,006.00	150,000,005.00	180,000,006.00	180,000,006.00	180,000,006.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
6	ԷԷԳ համակարգ	33121100/	1	25,000,000.00	25,000,000.00	150,000,005.00	30,000,001.00	180,000,006.00	150,000,005.00	180,000,006.00	180,000,006.00	180,000,006.00	0.00	0.00	0.00	0.00	0.00

«Միսիսի Բ»-ի ԳԲԸ հաճեցնան համար անհրաժեշտ բեջկական սարքավորումների ձեռք բերանն նպատակով կազմակերպված ՀՀ ԱՍ ԷԱՏԱԴՅԸ-2026/42 ծածկագրով գնան ընթացակարգի գնային առաջարկները մինչև հավաքարձ անժուրը և 23.04.2026թ. Կայացած հավաքարձ անժուրից հետո:

Չ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		Տեխնո Մ ՄԴԸ						Ս ադ-Ֆարնացիա ՄԴԸ					
				Գնան գին/ ՀՀ դրամ		Վերջնական առաջարկ			Վերջնական առաջարկ			Վերջնական առաջարկ			Վերջնական առաջարկ		
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնան գին/ ՀՀ դրամ	ԱՍՀ	Գումար	Միավորի գին առանց ԱՍՀ-ով	Միավորի գին ԱՍՀ-ով	Այժմեք	ԱՍՀ	Գումար	Միավորի գին առանց ԱՍՀ-ով	Միավորի գին ԱՍՀ-ով	Այժմեք	ԱՍՀ	Գումար
1	Բժշկական թվային ռադիոգրաֆիայի և ֆլուորոսկոպի սարքավորում	33111330/	1	48,000,000.00	48,000,000.00		0.00	0.00	0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00	0.00
2	Ինսպեկտիոն անզգայացման սարք	33171700/	3	10,000,000.00	30,000,000.00	0.00	20,600,000.00	6,866,666.67	6,866,666.67	6,866,666.67	6,866,666.67			0.00	0.00	0.00	0.00
3	(Թրքերի արհեստական շնչառության սարք (ԹԱՇ))	33151250/	6	8,500,000.00	51,000,000.00	8,244,600.00	41,223,000.00	49,467,600.00	6,870,500.00	8,244,600.00	8,244,600.00			0.00	0.00	0.00	0.00
4	Լապարոսկոպ որովայնային, ուրոլոգիական, գինեկուրիական և արթրոսկոպիկ միջանոթայինների համար	33161190/	1	78,380,000.00	78,380,000.00			0.00	0.00	0.00	0.00	70,000,000.00	0.00	70,000,000.00	70,000,000.00	70,000,000.00	70,000,000.00
5	Վիրաբուժական ունտղին համակարգ (C-Arm)	33111100/	1	48,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00	0.00	46,500,000.00	0.00	46,500,000.00	46,500,000.00	46,500,000.00	46,500,000.00
6	ԷԷԳ համակարգ	33121100/	1	25,000,000.00	25,000,000.00			0.00	0.00	0.00	0.00	35,000,000.00	0.00	35,000,000.00	35,000,000.00	35,000,000.00	35,000,000.00

«Միսիանի ԲԿ» ՓԲԸ հազվեցնան համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԼՄԼԿԳԲ-2026/42 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հավաքարձ անուրրը և 23.04.2026թ. հայացած հավաքարձ անուրրից հետո:

Չ/Հ	Սարքավորման անվանումը	CFV կոդը	Քանակ	Նավահաշվային		Սնուրթել կողմ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Վերջնական առաքարկ				
						Այլմեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Բժշկական թվային ռադիոլոգիայի և ֆլյուորոսկոպիայի սարքավորում	33111330/	1	48,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00
2	Ինհալյացիոն անձրայացման սարք	33171700/	3	10,000,000.00	30,000,000.00			0.00	0.00	0.00
3	Թորքերի արհեստական շնչատուրան սարք (ՇԱԸ)	33151250/	6	8,500,000.00	51,000,000.00			0.00	0.00	0.00
4	Լապարոսկոպ որովայնային, ուրոլոգիական, գինեկրիոգիական և արդրոսկոպիկ միջանտաբյունների համար	33161190/	1	78,380,000.00	78,380,000.00			0.00	0.00	0.00
5	Վիրաբուժական ռեևսոգնն համակարգ (C-Arm)	33111100/	1	48,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00
6	ԷԷԳ համակարգ	33121110/	1	25,000,000.00	25,000,000.00	15,777,000.00	0.00	15,777,000.00	15,777,000.00	15,777,000.00